ԴԱՎԻԹ ՔԵՐԹՄԵՆՋԵԱՆ. Կառուցեալ հաւատով Համադրական ուսումնասիրութիւն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառուցապատման Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան տարիներին (1999-2011 թթ.). Ս. Էջմիածին, 2011 թ.

Հայաստանում անկախության 20 տարիներին ծավալված վերելքի կերտման մեջ կարեւոր դեր ունեցան նաեւ շինարարական գործերը, որտեղ եկեղեցական եւ հոգեւոր շենքերի բաժնով գնահատելի ներդրում են մերօրյա Հայոց Վեհափառի նախաձեռնությամբ իրականացված կառույցները: Ներկայացվող գրքում քննականորեն ամփոփվել են Գարեգին Բ. Կաթողիկոսի օրոք իրականացված շինարարական ծրագրերը: Աշխատության հեղինակն է ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Քերթմենջյանը: Այն հրատարակության է պատրաստվել՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչության մատենաշարով եւ Գերաշնորհ Տեր Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանի խմբագրությամբ:

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շինարարական գործունեությունը անհրաժեշտաբար արգասաբեր բնույթ կրեց՝ բավարարելու համար խորհրդահայ իրականությանը հաջորդող անկախության ժամանակաշրջանի Հայաստանի քրիստոնեական հոգեւոր կյանքի պահանջները: Գրքում ներկայացվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարածքի եկեղեցական, հասարակական, արտադրական եւ մեմորիալ ճարտարապետության նորակառույց եւ վերակառուցված շենքերը, վերլուծվել են նրանցով կազմված համալիրի հորինվածքային առանձնահատկությունները: Աշխատությունում ժառանգորդական խնդիրներով պայմանավորված ներգրավվել են Ս. Էջմիածնի համալիրի պատմական զարգացման փվյալները, իսկ շինարարական գործունեության կապակցությամբ ներկայացվել են Գարեգին Բ. Կաթողիկոսի գահակալության տարիներին՝ 1999-2011 թթ. իրականացված ճարտարապետաշինարարական միջոցառումները: Փստորեն՝ Մայր Աթոռում, հայրենական եւ սփյուռքի գաղթօջախների թեմերում Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին իրականացված եկեղեցաշինական գործունեությունը հայկական արդի ճարտարապետության բաղկացուցիչն է, առանց դրան թերի կմնար անկախության տարիների ճարտարապետության ուսումնասիրությունը, որ լրացվում է սույն աշխատությամբ:

«Կառուցեալ հաւատով» գիրքը ունի կուռ կառուցվածք: Այն կազմված է ներածության հաջորդող երեք գլուխներից, վերջաբանից, շինարարական արձանագրությունների մասից ու գրականության ցանկից: Աշխատությունը ամբող-

ջությամբ 216 էջ է՝ ներառյալ մանրամասնող պատկերները եւ գծագրերը:

Առաջին գլուխը վերնագրված է «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառուցապատման բարելավումը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տարիներին»: Գլխի սկզբում ակնարկային կարգով անդրադարձ է կատարվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմնադրման եւ կառուցապատման զարգացմանը՝ մինչեւ Գարեգին Բ. Կաթողիկոսի գահակալությունը: «Կառուցեալ Հաւատով» գիրքը մեթոդականորեն շարադրվել է ընդհանուրից դեպի մանրամասն ընթացող հաջորդականությամբ: Այդ կապակցությամբ պատմական ակնարկին հաջորդում է Ս. Էջմիածնի տարածքի գլխավոր հատակագծի զարգացման վերլուծությունը Գարեգին Բ. Վեհափառի գահակալության տարիներին: Փաստորեն Մայր Աթոռի տարածքը հստակորեն բաժանվել է հինգ գոտիների, այդ թվում են՝ վանական բակը, ուսումնական, Վեհարանի բակի, հոգեւորականների բնակելի եւ օժանդակ արտադրական կառույցներով համալրված գոտիները: Մինչեւ նորակառույց շենքերի կառուցումը, նորոգվել եւ օպտիմալ կառուցապատման խտության է բերվել Մայր Աթոռի տարածքը: Համապատասխանաբար գլխի վերջին մասում՝ «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հին կառույցներին նոր կեանք» վերնագրով ներկայացվել են կատարված վերանորոգման եւ վերականգնման ճարտարապետաշինարարական գործերը եւ կատարվել է դրանց մասնագիտական բնութագրումը որպես՝ փաստագրական վերլուծություն, վերակառուցում եւ միջավայրի ձեւավորման բաղադրիչներ:

Երկրորդ գլխում վերլուծականորեն եւ տիպաբանական հաջորդականությամբ ներկայացվել են Մայր Աթոռի նորակառույց շենքերը: Այդ թվում են՝ Բաց-Խորանը, Ս. Վարդան եւ Ս. Հովհաննես Մկրտիչ մկրտարանը, Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին, Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի համալսարանական հաստատության վերածումն ու նրա նորակառույցները, երջանկահիշատակ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Կրթական կենտրոնը, միաբանական բնակելի համակառույցը, դիվանատան շենքը, Վաչե եւ Թամար Մանուկյանների անվան մատենադարանը, Վեհարանի հանդիսությունների դահլիճը, Էօրնեքյան դպրոցը, արտադրական համակառույցը, վանքապատկան մանկական խաղավայրը, Ճարտարապետական փոքր ձեւերը եւ քանդակային ձեւավորումները՝ «Լուսավորչի Աջը», Վազգեն Ա. Հայրապետի արձանը, Ալեք եւ Մարի Մանուկյանների հուշակոթողը եւ այլն:

Հեղինակին հաջողվել է բացահայտել նորակառույցների ստեղծագործական մտահղացումը, հիմնավորել իրականացված ծավալային ձեւերի պատճառականությունը եւ նվաճված տարածության անսամբլային արժեքը: Փաստորեն, նշված շենքերով Մայր Աթոռի համալիրը ոչ միայն ընդարձակվեց, այլեւ վերածվեց միջազգային նշանակության կրոնադավանական համալիրի:

Երրորդ գլխում Մայր Աթոռի համալիրը համադրվել է մի շարք միջազգային նշանակության կրոնադավանական համալիրների հետ, ինչպիսիք են՝ Վատիկանի Ս. Պետրոս տաճարի Պապական համալիրը, Մոսկվայի եւ համայն Ռուսիո պատրիարքության Ս. Երրորդություն եւ Ս. Սերգիոս վանքային ու Ս. Փրկիչ Մայր տաճար համալիրները, Կ. Պոլսի հունական պատրիարաքության Ս. Գեւորգ Մայր տաճարի համալիրը Ֆանարում, Քենթրբերի-Լամբեթ Արքեպիսկոպոսության համալիրը Անգլիայի Միացյալ Թագավորությունում, Անտիոքի սիրիական ուղղափառ արքեպիսկոպոսության եւ Ղպտիների ուղղափառ պատրիարքության համալիրները եւ այլն: Գլխում համեմատական վերլուծության մեթոդական սկզբունքներով մեկնաբանվել է Մայր Աթոռի ժառանգորդական եւ ժամանակակից պահանջներով կատարելագործման էությունը:

Իրոք, հեղինակը՝ Դ. Գ. Քերթմենջյանը ճիշտ է գնահատում ծավալված շինարարական գործունեությունը: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարածքային ընդարձակումը Գարեգին Բ. Կաթողիկոսի գահակալության տարիներին կատարվեց եւ կատարվում է ստեղծագործաբար: Համալիրի միջավայրային, տիպաբանական հասկացությունները օպտիմալացվեցին կատարելաբար: Այն հորինվածքային առումով դարձավ կուռ եւ օրինաչափ: Մայր Աթոռը վերածվեց համաշխարհային մասշտաբներով բնութագրվող համալիրի եւ՝ բովանդակությամբ, եւ՝ գեղագիտությամբ: Ս. Էջմիածնի համալիրը փոքր երկրի հզոր հոգեւոր կենտրոն է: Հանձին նրա փոքրատարածք հայրենիքը եւ աշխարհասփյուռ հայությունը օժտվեցին հզոր բաբախող սրտով, որ մարմնավորվեց որպես համայն հայության կրոնաազգային մեծ կենտրոն: Այն մշակույթով հզոր հայ ժողովրդի ինքնահաստատումն է, որին սատարեց հայոց մերօրյա Գարեգին Բ. շինարար Հայրապետը:

Դավիթ Քերթմենջյանի «Կառուցեալ հաւատով» գիրքը ընդարձակում եւ լրացնում է հայկական արդի ճարտարապետության ժամանակակից փուլը: Աշխատության մեջ ուսումնասիրված շենքերը քննականորեն շրջանառության մեջ են դրվել հայկական եւ միջազգային զուգահեռներով: Աշխատությունը փաստագրավավերագրական, գիտական եւ մեթոդական կարեւոր ներդրում է:

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ճարտարապետության դոկտոր